Վարազդատ Հարությունյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ճարտարապետների միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ:

Ծնվել է 1909թ. Վանում:

1915թ. ընտանիքով գաղթել են Էջմիածին, ապա բնակություն հաստատել Թիֆլիսում՝ Ծիրանավոր վանքին կից որբանոցում (մինչև 1917թ.):

1927թ. ավարտել է Թիֆլիսի № 82 հայկական միջնակարգ դպրոցը:

1927թ. տեղափոխվել է Հայաստան և մինչև 1931թ. որպես ուսուցիչ աշխատել է Ալավերդու Շնող և Արճիս գյուղերի դպրոցներում:

1937թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժինը:

1932-1933թթ. եղել է «Սովետական ճարտարապետ» թերթի պատասխանատու քարտուղար, ապա՝ խմբագիր:

1938-1939թթ. աշխատել է ԵրՊԻ-ի ճարտարապետական ամբիոնում որպես ասիստենտ, վարել է շինարարական ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

1939-1941թթ. մանկավարժական աշխատանքին զուգահեռ ասպիրանտական ուսուցում է անցել ՍՍՀՄ ԳԱ պատմության և հնագիտության ինստիտուտում և որպես ճարտարապետ ընդգրկվել Դվինի հնագիտական արշավախմբի կազմում:

1941-1942թթ. զորակոչվել է բանակ և ինժեներ-շինարար մասնագիտությամբ ծառայել Ծաղկաձորի զինվորական հիվանդանոցում:

1942-1945թթ. աշխատել է ԵրՊԻ-ի ուսումնական մասի պետ:

1945թ. ստանձնել է նույն ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի վարիչի պաշտոնը՝ մինչև 1990թ.:

1945-1948թթ. եղել է կառավարությանն առընթեր ճարտարապետության գործերի վարչության պետի առաջին տեղակալ, 1948-1951թթ.՝ նույն վարչությանը ենթակա Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ, 1951-1953թթ.՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի սեկտորի վարիչ:

1946թ. պաշտպանել է ատենախոսություն՝ ստանալով ճարտարապետական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա՝ դոցենտի կոչում:

1964թ. ստացել է ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան (առաջինը Հայաստանում), 1965թ.՝ պրոֆեսորի կոչում։

Հեղինակել է Հայաստանի հին և նոր ճարտարապետության ու քաղաքաշինության պատմությանը նվիրված 7 աշխատություն։ Հեղինակ է նաև 30 մենագրության, 600-ից ավելի մասնագիտական և հրապարակախոսական հոդվածների, հարյուրավոր գիտական զեկուցման։

Նրա անմիջական ղեկավարությամբ վերականգնվել են 30-ից ավելի վանքային համալիրներ, եկեղեցիներ և այլ հուշարձաններ։

1949-1963թթ եղել է Հայաստանի ճարտարապետների միության քարտուղարության անդամ, նախագահի տեղակալ, 1962-1974թթ.՝ վարչության նախագահ, ԽՍՀՄ ճարտարապետների միության վարչության անդամ։

1964-1977թթ.՝ Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության հանրապետական խորհրդի նախագահի տեղակալ, 1977-2008թթ.՝ նախագահ։

1980-1990թթ. եղել է «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիր անդամ և նախագահ, 1990-2008թթ.՝ պատվավոր նախագահ։

1956-1972թթ.՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական հանձնաժողովի անդամ, գիտական քարտուղար, 1972-2008թթ.՝ նախագահ։